**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

---

ք. Երևան 12.12.2019թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
## թիվ ԳԲՔԱ-LO-2019/100

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Բողոքաբեր՝ «Եվրոֆարմ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

Պատվիրատուի ներկայացուցիչ՝ Վ. Վահանյանի,

«Եվրոֆարմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Մ. Ավետիսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/4» ծածկագրով գնանշման հարցում, դեղորայքի ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Եվրոֆարմ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 29.11.2019թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

## 1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին անվավեր ճանաչել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/4» ծածկագրով գնման ընթացակարգի 28.10.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետով կայացված՝ 9-րդ և 15-րդ չափաբաժիններով «Լիկվոր» ՓԲԸ-ին հաղթող ճանաչելու, նույն արձանագրության 3.4 կետով կայացված 15-րդ չափաբաժինը չկայացած հայտարարելու մասին որոշումները և «Եվրոֆարմ» ՍՊԸ-ին 9-րդ ու 15-րդ չափաբաժինների մասով ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ի լրումն 29.11.2019թ.-ին ներկայացված բողոքի, «Եվրոֆարմ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է նաև՝ թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/100 բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում ներկայացված պահանջից բացի ներառել՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/4» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պարտավորեցնել 2019 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 1.3 որոշմամբ հաստատված և հավելված 1-ով 9-րդ և 15-րդ չափաբաժիններով հաղթող մասնակից ճանաչված «Լիկվոր» ՓԲԸ-ի հետ նույն չափաբաժիններով պայմանագիր կնքելու մասին որոշումն ճանաչել անվավեր:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 26.11.2019թ.-ին:

28.11.2019թ.-ին այն վերադարձվել է՝ բողոքում առկա խախտումները վերացնելու համար:

Բողոքը կրկին՝ վերադարձնելուց հետո Բողոքներ քննող անձին է մակագրվել 29.11.2019թ.-ին:

02.12.2019թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 06.12.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 02.12.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 12.12.2019թ.-ին:

## 2. «Եվրոֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Եվրոֆարմ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

*««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/4» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի 2019թ. հոկտեմբերի 16-ի N 1 որոշմամբ հրապարակված հրավերին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Եվրոֆարմ» ՍՊԸ-ն:*

*28.10.2019թ. ժամը 11:00-ին, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) տեղի ունեցած գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության 4.1-րդ կետի համաձայն և ըստ հավելված թիվ 1-ի հիմք ընդունելով մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը հանձնաժողովը որոշել է 9-րդ և 15-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Լիկվոր» ՓԲԸ-ին:*

*Գնման առարկայի 9-րդ չափաբաժնում ընդգրկված «Ցիպրոֆլոքսացին (ցիպրոֆլոքսացինի հիդրոքլորիդ)» /դեղաձև Լուծույթ կաթիլաներարկման/ դեղորայքի համար պլանավորած նախահաշվային գին է սահմանվել 592.750 ՀՀ դրամ: Վերոնշյալ գնման առարկայի համար ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.*

1. *<<Եվրոֆարմ>> ՍՊԸ-592.500 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ,*
2. *<<Արֆարմացիա>> ՓԲԸ-775.000 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ,*
3. *<<Լիկվոր>> ՓԲԸ-894.000 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ,*
4. *<<Սիղա Թրեյդ» ՍՊԸ-1.750.000 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ:*

*Գնման առարկայի 15-րդ չափաբաժնում ընդգրկված <<Մոքսիֆլոքսացին (մոքսիֆլոքսացինի)>> /դեղաձև՝ Լուծույթ կաթիլաներարկման/ դեղորայքի համար պլանավորած նախահաշվային գին է սահմանվել 4.800.000 ՀՀ դրամ: Վերոնշյալ գնման առարկայի համար ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.*

1. *<<Եվրոֆարմ>> ՍՊԸ-1.760.000 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ,*
2. *<<Լիկվոր>> ՓԲԸ-2.133.600 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ,*
3. *«Արֆարմացիա» ՓԲԸ-2.400.000 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ:*

*Թիվ 3 արձանագրության 3.3 կետի համաձայն «ՀՀ ՊՆ ՆՏԱԳ-ԳՀԱՊՁԲ-20-9/4» ծածկագրով ընթացակարգն իրականացվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և բացի այդ, ընթացակարգի 3-րդ, 4-րդ, 7-րդ, 9-րդ, 20-րդ, 23-րդ, 24-րդ, 27-րդ, 28-րդ, 30-րդ, 31-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 43-րդ, 43-րդ, 44-րդ, 48-րդ, 52-րդ, 56-րդ, 64-րդ, 68-րդ և 73-րդ չափաբաժինների մասով մասնակիցների կողմից առաջարկված գները գերազանցում են տվյալ գնման համար պատվիրատուի պլանավորած նախահաշվային գինը, ուստի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի և ընթացակարգի*

*հրավերի 7.6 և 7.7 կետերի պահանջները, գնահատող հանձնաժողովը 30.10.2019թ.-ին որոշեց կասեցնել հայտերի բացման նիստը որոշեց գների նվազեցման նպատակով 08.11.2019թ. ժամը 11:50-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) բավարար գնահատված և տվյալ չափաբաժինների մասով գնային առաջարկ ներկայացրած բոլոր մասնակիցների հետ (<<Եվրոֆարմ>> ՍՊԸ, <<Լիկվոր» ՓԲԸ....) կազմակերպել միաժամանակյա բանակցություններ և նիստը շարունակել այդ օրը:*

*Գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը նշված մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցեց նշված բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:*

*08.11.2019թ., ժամը 11:50-ի կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետին կազմակերպված բանակցություններին մասնակցելու համար ծանուցված մասնակիցներից ներկայացել էին <<Միդա Թրեյդ>>, <<Թեոֆարմա Իմպորտ>> ՍՊԸ-ների տնօրենները և <<Լիկվոր>> ՓԲԸ-ի, <<Ռիխտեր-Լամբրոն>>, << ԹՈՒՖԷՆՔԺԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ների տնօրենների կողմից լիազորված անձիք:*

*Անցկացված բանակցությունների արդյունքում <<Լիկվոր>> ՓԲԸ-ի ներկայացուցիչը, համաձայնվեց նվազեցնել ներքոհիշյալ չափաբաժինների գները.*

*9-րդ չափաբաժնի ընդամենը գինը 894.000 /ներառյալ ԱԱՀ-ն/, սահմանելով 555.000 /ներառյալ ԱԱՀ-ն/ ՀՀ դրամ,*

*15-րդ չափաբաժնի ընդամենը գինը 2.133.600 /ներառյալ ԱԱԾ-ն/, սահմանելով 1.368.000 /ներառյալ ԱԱՀ-ն/ ՀՀ դրամ:*

*Նույն արձանագրության 4.1 կետի համաձայն 12.11.2019թ. (էլեկտրոնային գնահատման արդյունքում) «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի տարբեր չափաբաժիններում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեցին հետևյալ մասնակիցները, տես հավելված N 1:*

*Ըստ թիվ 1 հավելվածի 9-րդ և 15-րդ չափաբաժիններում 1-ին տեղն է զբաղեցրել <<Լիկվոր» ՓԲ ընկերությունը, համապատասխանաբար 555.000 ՀՀ դրամ և 1.728.000 ՀՀ դրամ գնային առաջարկներով:*

*Գտնում ենք, որ հանձնաժողովի 28.10.2019թ. ժամը 11:00-ին, գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության 4.1-րդ կետով գնման առարկայի 9-րդ և 15-րդ չափաբաժիններով «Լիկվոր» ՓԲԸ-ին հաղթող ճանաչելու արձանագրությունն անհիմն է և ենթակա է վերացման, հետևյալ հիմնավորմամբ.*

*Արձանագրության 3.4 կետի համաձայն հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը, հանձնաժողովը որոշեց 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 14-րդ, 15-րդ, 17-րդ,... չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարել չկայացած հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը (ոչ մի հայտ չի ներկայացվել):*

*Ընդ որում, 15-րդ չափաբաժնի մասով հայտ էին ներկայացրել մասնակիցներ <<Եվրոֆարմ» ՍՊ ընկերությունը, «Լիկվոր» ՓԲ ընկերությունը և «Արֆարմացիա» ՓԲ ընկերությունը:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝*

*1) երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ,*

*2) սույն օրենքով նախատեսված այլ դեպքերի:*

*ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր*

*մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում ենե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը....:*

*Տվյալ դեպքում «Եվրոֆարմ» ՍՊԸ-ն 9-րդ չափաբաժնի համար գնային առաջարկ է ներկայացրել, սահմանելով 592.500 ՀՀ դրամ /ներառյալ ԱԱՀ-ն/, իսկ պլանավորած նախահաշվային գինը սահմանված է եղել 592.750 22 դրամ: Իսկ 15-րդ չափաբաժնի համար գնային առաջարկ է ներկայացրել, սահմանելով 1,760.000 ՀՀ դրամ /ներառյալ ԱԱՀ-ն/, իսկ պլանավորած նախահաշվային գինը սահմանված է եղել 4.800.000 ՀՀ դրամ: Այսինքն, «Եվրոֆարմ» ՍՊԸ-ն 9-րդ և 15-րդ չափաբաժինների համար սահմանել է տվյալ ընթացակարգի շրջանակում պլանավորած նախահաշվային գնից ցածր գին, հետևաբար հանձնաժողովը իրավունք չուներ բանակցելու մասնակիցների հետ՝ գնի նվազեցման նպատակով կամ չկայացած հայտարարելու, քանի որ «Եվրոֆարմ» ՍՊԸ-ն նախահաշվային գնից ցածր գին առաջարկելով ձեռք էր բերել նախապատվության իրավունք:*

*Բացի այդ, 08.11.2019թ. ժամը 11:50-ին բանակցությունների վարման հրավիրված նիստին «Եվրոֆարմ» ՍՊ ընկերությունը չի ծանուցվել:*

*Միաժամանակ թիվ 3 արձանագրությունում առկա են էական հակասություններ ու բացթողումներ, այսպես.*

*Արձանագրության 3.3 կետի համաձայն «ՀՀ ՊՆ ՆՏԱԳ-ԳԷԱՊՁԲ-20-9/4» ծածկագրով ընթացակարգն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և բացի այդ, ընթացակարգի 3-րդ, 4-րդ, 7-րդ, 9-րդ, 20-րդ, 23-րդ, 24-րդ, 27- րդ, 28-րդ, 30-րդ, 31-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 43-րդ, 43-րդ, 44-րդ, 48-րդ, 52-րդ, 56-րդ, 64-րդ, 68-րդ և 73-րդ չափաբաժինների մասով մասնակիցների կողմից առաջարկված գները գերազանցում են տվյալ գնման համար պատվիրատուի պլանավորած նախահաշվային գինը, ուստի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի և ընթացակարգի հրավերի 7.6 և 7.7 կետերի պահանջները, գնահատող հանձնաժողովը 30.10.2019թ.-ին որոշեց կասեցնել հայտերի բացման նիստը որոշեց գների նվազեցման նպատակով 08.11.2019թ. ժամը 11:50-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) բավարար գնահատված և տվյալ չափաբաժինների մասով գնային առաջարկ ներկայացրած բոլոր մասնակիցների հետ («Եվրոֆարմ» ՍՊԸ, «Լիկվոր» ՓԲԸ....) կազմակերպել միաժամանակյա բանակցություններ և նիստը շարունակել այդ օրը:*

*Տվյալ դեպքում, 15-րդ չափաբաժինն արձանագրության 3.3 կետում չի նշվել, սակայն բանակցությունների վարման արդյունքում «Լիկվոր» ՓԲԸ-ի ներկայացուցչի կողմից նվազեցվել է վերոնշյալ չափաբաժնի գինը, որի արդյունքում էլ ճանաչվել է հաղթող: Ավելին 15-րդ չափաբաժնով Արձանագրության 3.4 կետի համաձայն գնման ընթացակարգը հայտարարվել էր չկայացած:»:*

Վերոգրյալով պայմանավորված, «Եվրոֆարմ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին անվավեր ճանաչել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/4» ծածկագրով գնման ընթացակարգի 28.10.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետով կայացված՝ 9-րդ և 15-րդ չափաբաժիններով «Լիկվոր» ՓԲԸ-ին հաղթող ճանաչելու, նույն արձանագրության 3.4 կետով կայացված 15-րդ չավաւբաժինը չկայացած հայտարարելու մասին որոշումները և «Եվրոֆարմ» ՍՊԸ-ին 9-րդ ու 15-րդ չափաբաժինների մասով ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ի լրումն 29.11.2019թ.-ին ներկայացված բողոքի, «Եվրոֆարմ» ՍՊԸ-ն հայտնել է հետևյալը.

*«Ի լրումն 29.11.2019թ.-ին Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքով ներկայացված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/4 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 28.10.2019թ. ժամը 11:00-ին, Գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության 4.1-րդ կետով 9-րդ 15-րդ չափաբաժիևևերով «Լիկվոր» ՓԲԸ-ին հաղթող ճանաչելու մասին որոշումը, և գնման առարկայի 9-րդ և 15-րդ չավևաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Եվրոֆարմ>> ՍՊԸ-ին պահանջի մասին բողոքը, որով նիստ է հրավիրված 06.12.2019թ., ժամը 17:00-ին, լրացնում ենք հետևյալ պահանջով.*

*«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/4» ծածկագրով պայմանագիր կնքելու որոշման մասին գնահատող հանձնաժողովի կողմից 02.12.2019թ.-ին հայտարարություն է հրապարակվել, համաձայն որի Գնահատող հանձնաժողովի 2019 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 1.3 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի հրավերի պահանջներին անհամապատասխանության գնահատման արդյունքները, հայտարարությանը կից հավելված N 1-ով, համաձայն որի <<Լիկվոր>> ՓԲԸ-ն ճանաչվել է հաղթող մասնակից 9-րդ և 15-րդ չափաբաժիններով որպես որակավորման պահանջներին համապատասխանող և առավել ցածր գին առաջարկած մասնակից:*

*Վերոգրյալի հիման վրա, խնդրում եմ թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/100 բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում ներկայացված պահանջից բացի ներառել նաև <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/4>> ծածկագրով գնման ընթացակարգի Գնահատող հանձնաժողովին պարտավորեցնել 2019 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 1.3 որոշմամբ հաստատված և հավելված N 1-ով 9-րդ և 15-րդ չափաբաժիններով հաղթող մասնակից ճանաչված <<Լիկվոր>> ՓԲ ընկերության հետ 9-րդ և 15-րդ չափաբաժիններով պայմանագիր կնքելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջը:»:*

Վերոգրյալով պայմանավորված, «Եվրոֆարմ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է նաև՝ թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/100 բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում ներկայացված պահանջից բացի ներառել՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/4» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պարտավորեցնել 2019 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 1.3 որոշմամբ հաստատված և հավելված 1-ով 9-րդ և 15-րդ չափաբաժիններով հաղթող մասնակից ճանաչված «Լիկվոր» ՓԲԸ-ի հետ նույն չափաբաժիններով պայմանագիր կնքելու մասին որոշումն ճանաչել անվավեր:

**3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 02.12.2019թ.-ին գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ հնարավորություն տալով «Եվրոֆարմ» ՍՊԸ-ի կողմից 29.11.2019թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 05.12.2019թ.-ի թիվ Մ-54608-2019 գրությամբ հայտնել է հետևյալը.

*««Եվրոֆարմ» ՍՊԸ-ի կողմից բողոքի տեքստում հղում է կատարվում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բանակցություններ իրականացնելու կարգին վերաբերվող հոդվածներին և կետերին, սակայն բովանդակային առումով մեջբերվում է այդ նորմերի միայն մի մասը և տպավորություն է ստեղծվում, որ գնահատող հանձնաժողովի կողմից բանակցությունները կազմակերպվել են առանց իրավական հիմքի, բայց իրականությունն այլ է: Ըստ «Եվրոֆարմ» ՍՊԸ-ի պնդման՝ բանակցություններ կարող են անցկացվել, եթե առկա է առաջարկված գների հավասարություն կամ առաջարկված բոլոր գները գերազանցում են պատվիրատուի՝ տվյալ գնման համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, սակայն ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով հստակ սահմանված է,*

*որ ի թիվս այլ դեպքերի՝ եթե ընթացակարգն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, ապա պետք է իրականացվեն բանակցություններ՝ անկախ առաջարկված գներից, և քանի որ Ընթացակարգն իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել կազմակերպել բանակցություններ: Հարկ է նկատել, որ Ընթացակարգի հրավերի 7.6 և 7.7 կետերով ևս հստակ սահմանված են եղել բանակցություններ անցկացնելու դեպքերը և դրանց կարգը: Ինչ վերաբերվում է բողոքաբերի կողմից բարձրացված այն հարցին, թե ըստ արձանագրության՝ 9-րդ չափաբաժնի մասով բանակցությունը կազմակերպվել է այն հիմքով, որ մասնակիցների առաջարկած գները գերազանցում են նախահաշվային գները, ապա դա զուտ տեխնիկական վրիպակի արդյունք է և քննարկվող ենթատեքստում որևէ նշանակություն չունի, քանի որ անկախ տվյալ չափաբաժնի մասով առաջարկված գներից, բանակցությունները պետք է կազմակերպվեին, քանի որ Ընթացակարգն իրականացվում էր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և որի մասին էլ հստակ նշված է թե արձանագրության և թե մասնակիցներին ուղարկված ծանուցման տեքստի մեջ:*

*«Եվրոֆարմ» ՍՊԸ-ի պնդմամբ՝ կազմակերպությունը չի ծանուցվել 08.11.2019թ. ժամը 11:50-ին կազմակերպված բանակցությանը մասնակցելու համար. հավաստում եմ, որ «Եվրոֆարմ» ՍՊԸ-ն հանձնաժողովի քարտուղարի կողմից սահմանված ժամկետում և կարգով ծանուցվել է բանակցությունների մասնակցելու համար: Նշված փաստն ապացուցելու համար կից ներկայացնում եմ Armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցումների ցանկի արտատպումը, որտեղ հստակ երևում է, որ «Եվրոֆարմ» ՍՊԸ-ին 30.10.2019թ. ծանուցումն ուղարկվել է:*

*Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ արձանագրության 3.4 կետում ի սկզբանե տեղ էր գտել անճշտություն և նշվել էր, որ հանձնաժողովը որոշել է 15-րդ չափաբաժնի մասով ևս ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ (ոչ մի հայտ չի ներկայացվել), այնինչ տվյալ չափաբաժնի մասով առկա է առաջին տեղ զբաղեցնող մասնակից: Նշված անհամապատասխանությունը նկատելուն պես շտկվել է և 28.11.2019թ. արձանագրության շտկված տարբերակը հրապարակվել է պաշտոնական տեղեկագրում (Կցվում է):*

*Ամփոփելով վերգրյալը՝ հայտնում եմ, որ հանձնաժողովը ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/4 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայտերի գնահատման գործընթացն իրականացնելիս գործել է իրավաչափ:»:*

**4. <u>ԳԲՔԱ-LO-2019/100 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով 16.10.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) հավելված 1-ով (այսուհետ՝ Հավելված 1) սահմանվել է, որ գնման ժամանակացույցը կսահմանվի համապատասխան ֆինանսական միջոցներ հատկացվելուց հետո՝ կնքվելիք համաձայնագրով սահմանված ժամկետում՝ պահպանելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերության պահանջները:

Հրավերում առկա պայմանագրի նախագծի 8.15 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.6 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ երբ ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված՝ սույն հրավերի 1-ին մասի 7.1 կետի 2-րդ պարբերությամբ նախատեսված ֆինանսական միջոցները կամ գնումն

իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտ է ներկայացրել նաև «Եվրոֆարմ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը թիվ 2 հավելվածով գնային առաջարկը ներկայացրել է միայն 9-րդ և 15-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 28.11.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/4» ծածկագրով ընթացակարգն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և բացի այդ, ընթացակարգի 3-րդ, 4-րդ, 7-րդ, 9-րդ, 20-րդ, 23-րդ, 24-րդ, 27-րդ, 28-րդ, 30-րդ 31-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 43-րդ, 44-րդ, 48-րդ, 52-րդ, 56-րդ, 64-րդ, 68-րդ և 73-րդ չաւիաբաժինների մասով մասնակիցների կողմից առաջարկված գները գերազանցում են տվյալ գնման համար պատվիրատուի պլանավորած նախահաշվային գինը, իսկ 8-րդ, 10-րդ, 14-րդ, 21-րդ, 22-րդ, 32-րդ, 40-րդ, 41-րդ, 42-րդ, 46-րդ, 49-րդ, 51-րդ, 55-րդ, 58-րդ, 60-րդ, 61-րդ, 63-րդ, 65-րդ, 67-րդ և 70-րդ չաւիաբաժինների մասով հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետերի և ընթացակարգի հրավերի 7.6 և 7.7 կետերի պահանջները, գնահատող հանձնաժողովը 30.10.2019թ.-ին որոշել է կասեցնել հայտերի բացման նիստը և գների նվազեցման նպատակով 08.11.2019թ.-ին ժամը 11:50-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) բավարար գնահատված և տվյալ չաւիաբաժինների մասով գնային առաջարկ ներկայացրած բոլոր մասնակիցների հետ («Աիդա Թրեյդ», «Արփիմեդ», «Եվրոֆարմ», «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ, «Տոնոա-Աես», «Թուֆէնկժի Գրուպ», «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ների, «Լիկվոր» «Արֆարմացիա» ՓԲԸ-ի և Գոռ Մնացականյան Ա/Ձ-ի հետ) կազմակերպել միաժամանակյա բանակցություններ և նիստը շարունակել այդ օրը:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը նշված մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել է նշված բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

08.11.2019թ.-ին, ժամը 11:50-ի կայացած նիստում հանձնաժողովն արձանագրել է, որ սահմանված ժամկետին կազմակերպված բանակցություններին մասնակցելու համար ծանուցված մասնակիցներից ներկայացել էին «Աիդա Թրեյդ», «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ների տնօրենները և «Աիկվոր» ՓԲԸ-ի, «Ռիխտեր-Համբրոն», «Թուֆէնկժի Գրուպ» ՀՁ ՍՊԸ-ների տնօրենների կողմից լիազորված անձիք:

Անցկացված բանակցությունների արդյունքում՝ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի տնօրենը, համաձայնվել է նվազեցնել ներքոհիշյալ չափաբաժինների գները.

18-րդ չափաբաժնի ընդամենը գինը՝ 9,000,000 (ներառյալ ԱԱՀ-ն), սահմանելով՝ 3,399,000 (ներառյալ ԱԱՀ-ն) ՀՀ դրամ,

23-րդ չափաբաժնի ընդամենը գինը՝ 2,500,000 (ներառյալ ԱԱՀ-ն), սահմանելով՝ 309,500 (ներառյալ ԱԱՀ-ն) ՀՀ դրամ,

24-րդ չափաբաժնի ընդամենը գինը՝ 600,000 (ներառյալ ԱԱՀ-ն), սահմանելով՝ 186,000 (ներառյալ ԱԱՀ-ն) ՀՀ դրամ.

30-րդ չափաբաժնի ընդամենը գինը՝ 800,000 (ներառյալ ԱԱՀ-ն), սահմանելով՝ 353,840 (ներառյալ ԱԱՀ-ն) ՀՀ դրամ,

31-րդ չափաբաժնի ընդամենը գինը՝ 5,200,000 (ներառյալ ԱԱՀ-ն), սահմանելով՝ 3,860,800 (ներառյալ ԱԱՀ-ն) ՀՀ դրամ,

35-րդ չափաբաժնի ընդամենը գինը՝ 4,500,000 (ներառյալ ԱԱՀ-ն), սահմանելով՝ 2,602,800 (ներառյալ ԱԱՀ-ն) ՀՀ դրամ,

48-րդ չափաբաժնի ընդամենը գինը՝ 150,000 (ներառյալ ԱԱՀ-ն), սահմանելով՝ 147,000 (ներառյալ ԱԱՀ-ն) ՀՀ դրամ,

«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի տնօրենը համաձայնվել է նվազեցնել 37-րդ չափաբաժնի ընդամենը գինը 4,350,000 (ներառյալ ԱԱՀ-ն), սահմանելով՝ 4,305,000 (ներառյալ ԱԱՀ-ն) ՀՀ դրամ, «Թուֆէնկժի Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը, համաձայնվել է նվազեցնել 23-րդ չափաբաժնի ընդամենը գինը 345,000 (ներառյալ ԱԱՀ-ն), սահմանելով՝ 310,000 (ներառյալ ԱԱՀ-ն) ՀՀ դրամ,

«Լիկվոր» ՓԲԸ-ի ներկայացուցիչը, համաձայնվել է նվազեցնել ներքոհիշյալ չաւիաբաժինների գները.

9-րդ չափաբաժնի ընդամենը գինը 894,000 (ներառյալ ԱԱՀ-ն), սահմանելով՝ 555,000 (ներառյալ ԱԱՀ-ն) ՀՀ դրամ,

15-րդ չափաբաժնի ընդամենը գինը 2,133,600 (ներառյալ ԱԱՀ-ն), սահմանելով՝ 1,728,000 (ներառյալ ԱԱՀ-ն) ՀՀ դրամ,

«Ռիխտեր-Լամբրոն» ՀՅ ՍՊԸ-ի ներկայացուցիչը, համաձայնվել է նվազեցնել ներքոհիշյալ չափաբաժինների գները.

27-րդ չափաբաժնի ընդամենը գինը 4,155,000 (ներառյալ ԱԱՀ-ն), սահմանելով՝ 4,050,000 (ներառյալ ԱԱՀ-ն) ՀՀ դրամ,

43-րդ չափաբաժնի ընդամենը գինը 1,395,772 (ներառյալ ԱԱՀ-ն), սահմանելով՝ 1,368,000 (ներառյալ ԱԱՀ-ն) ՀՀ դրամ, բայց քանի որ նվազեցման արդյունքում մասնակցի կողմից առաջարկված գները կրկին գերազանցում էին պատվիրատուի տվյալ գնման համար պլանավորած ֆինանսական միջոցների չափը, ուստի գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի հայտը 27-րդ և 43-րդ չաւիաբաժինների մասով:

Բոլոր այն չափաբաժիններ մասով, որտեղ մասնակիցների կողմից առաջարկված գները գերազանցում էին պատվիրատուի՝ տվյալ գնման համար պլանավորված ֆինանսական միջոցների չափը, իսկ բանակցության արդյունքում դրանք չնվազեցվեցին, հանձնաժողովը որոշել է տվյալ չափաբաժինների մասով մերժել մասնակիցներ հայտերը:

Հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը, հանձնաժողովը որոշել է՝ 3-րդ, 4-րդ, 7-րդ, 20-րդ, 27-րդ, 28-րդ, 34-րդ, 36-րդ, 43-րդ, 44-րդ, 52-րդ, 56-րդ, 64-րդ, 68-րդ և 73-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին), իսկ 1-ին, 2-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 16-րդ, 19-րդ, 25-րդ, 26-րդ, 29-րդ, 33-րդ, 38-րդ, 39-րդ, 45-րդ, 47-րդ, 50-րդ, 53-րդ, 54-րդ, 57-րդ, 62-րդ, 66-րդ, 69-րդ, 71-րդ և 72-րդ չափաբաժինների մասով՝ 3-րդ կետը (ոչ մի հայտ չի ներկայացվել):

12.11.2019թ.-ին (էլեկտրոնային գնահատման արդյունքում) «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի տարբեր չափաբաժիններում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեցին հետևյալ մասնակիցները՝ համաձայն Հավելված թիվ 1-ի:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 30.10.2019թ.-ին ծանուցում է ուղարկվել «Աիդա Թրեյդ», «Արփիմեդ», «Եվրոֆարմ», «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ, «Տոնոա-Աես», «Թուֆէնկժի Գրուպ», «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ների, «Լիկվոր» «Արֆարմացիա» ՓԲԸ-ի և Գոռ Մնացականյան Ա/Ձ-ի հետ 08.11.2019թ.-ին ժամը 11:50-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կայանալիք բանակցությունների մասին:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 12.12.2019թ.-ի թիվ Ն/26-1/1/40550-2019 գրությանբ հայտնել է, որ էլեկտրոնային գնումների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Եվրոֆարմ» ՍՊԸ-ի՝ «Armeps» համակարգում գրանցած europharmarmenia@yahoo.com էլեկտրոնային փոստի հասցեով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 30.10.2019թ.-ին ժամը 16:51-ին, 13.11.2019թ.-ին ժամը 14:19-ին, 13.11.2019թ.-ին ժամը 14:57-ին, 02.12.2019թ.-ին ժամը 12:22-ին ուղարկվել են էլեկտրոնային ուղերձ նամակներ: Ինչ վերաբերում է վերոգրյալ ծածկագրով ընթացակարգի ոչ ավտոմատ ծանուցումները մասնակցի կողմից ստանալուն, հայտնում ենք, որ դրանց հետ վերադարձի մասին հաղորդագրություն համակարգում առկա չէ:

## 5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Եվրոֆարմ» ՍՊԸ-ի կողմից 29.11.2019թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների

կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային

առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը:

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ հայտերի բացման նիստում հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը: Եթե հայտերի գնահատման ընթացքում արձանագրվում է առաջարկված նվազագույն գների հավասարության, կամ եթե մասնակցել է մեկ մասնակից, կամ եթե հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ պետք է վարվեն միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները:

Մասնակիցների՝ բացման նիստին ներկա չգտնվելու դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին, որը վարվում է ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով 16.10.2019թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի հավելված 1-ով սահմանվել է, որ գնման ժամանակացույցը կսահմանվի համապատասխան ֆինանսական միջոցներ հատկացվելուց հետո՝ կնքվելիք համաձայնագրով սահմանված ժամկետում՝ պահպանելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերության պահանջները:

Հրավերում առկա պայմանագրի նախագծի 8.15 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտ ներկայացրած «Եվրոֆարմ» ՍՊԸ-ն թիվ 2 հավելվածով գնային առաջարկը ներկայացրել է միայն 9-րդ և 15-րդ չափաբաժինների մասով:

Հանձնաժողովի 28.11.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/4» ծածկագրով ընթացակարգն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և բացի այդ, ընթացակարգի 3-րդ, 4-րդ, 7-րդ, 9-րդ, 20-րդ, 23-րդ, 24-րդ, 27-րդ, 28-րդ, 30-րդ 31-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 43-րդ, 44-րդ, 48-րդ, 52-րդ, 56-րդ, 64-րդ, 68-րդ և 73-րդ չաւիաբաժինների մասով մասնակիցների կողմից առաջարկված գները գերազանցում են տվյալ գնման համար պատվիրատուի պլանավորած նախահաշվային գինը, իսկ 8-րդ, 10-րդ, 14-րդ, 21-րդ, 22-րդ, 32-րդ, 40-րդ, 41-րդ, 42-րդ, 46-րդ, 49-րդ, 51-րդ, 55-րդ, 58-րդ, 60-րդ, 61-րդ, 63-րդ, 65-րդ, 67-րդ և 70-րդ չաւիաբաժինների մասով հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետերի և ընթացակարգի հրավերի 7.6 և 7.7 կետերի պահանջները, գնահատող հանձնաժողովը 30.10.2019թ.-ին որոշել է կասեցնել հայտերի բացման նիստը և գների նվազեցման նպատակով 08.11.2019թ.-ին ժամը 11:50-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) բավարար գնահատված և տվյալ չաւիաբաժինների մասով գնային առաջարկ ներկայացրած բոլոր մասնակիցների հետ («Աիդա Թրեյդ», «Արփիմեդ», «Եվրոֆարմ», «Ռիխտեր-Լամբրոն»

ՀՁ, «Տոնոա-Աես», «Թուֆէնկժի Գրուպ», «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ների, «Լիկվոր» «Արֆարմացիա» ՓԲԸ-ի և Գոռ Մնացականյան Ա/Ձ-ի հետ) կազմակերպել միաժամանակյա բանակցություններ և նիստը շարունակել այդ օրը:

08.11.2019թ.-ին, ժամը 11:50-ի կայացած նիստում հանձնաժողովն արձանագրել է, որ սահմանված ժամկետին կազմակերպված բանակցություններին մասնակցելու համար ծանուցված մասնակիցներից ներկայացել էին «Աիդա Թրեյդ», «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ների տնօրենները և «Աիկվոր» ՓԲԸ-ի, «Ռիխտեր-Աամբրոն», «Թուֆէնկժի Գրուպ» ՀՁ ՍՊԸ-ների տնօրենների կողմից լիազորված անձիք:

Անցկացված բանակցությունների արդյունքում՝ «Լիկվոր» ՓԲԸ-ի ներկայացուցիչը, համաձայնվել է նվազեցնել ներքոհիշյալ չաւիաբաժինների գները.

9-րդ չափաբաժնի ընդամենը գինը 894,000 (ներառյալ ԱԱՀ-ն), սահմանելով՝ 555,000 (ներառյալ ԱԱՀ-ն) ՀՀ դրամ,

15-րդ չափաբաժնի ընդամենը գինը 2,133,600 (ներառյալ ԱԱՀ-ն), սահմանելով՝ 1,728,000 (ներառյալ ԱԱՀ-ն) ՀՀ դրամ,

12.11.2019թ.-ին (էլեկտրոնային գնահատման արդյունքում) «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի տարբեր չափաբաժիններում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեցին հետևյալ մասնակիցները՝ համաձայն Հավելված թիվ 1-ի:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 30.10.2019թ.-ին ծանուցում է ուղարկվել «Աիդա Թրեյդ», «Արփիմեդ», «Եվրոֆարմ», «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ, «Տոնոա-Աես», «Թուֆէնկժի Գրուպ», «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ների, «Լիկվոր» «Արֆարմացիա» ՓԲԸ-ի և Գոռ Մնացականյան Ա/Ձ-ի հետ 08.11.2019թ.-ին ժամը 11:50-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կայանալիք բանակցությունների մասին:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 12.12.2019թ.-ի թիվ Ն/26-1/1/40550-2019 գրությանբ հայտնել է, որ էլեկտրոնային գնումների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Եվրոֆարմ» ՍՊԸ-ի՝ «Armeps» համակարգում գրանցած europharmarmenia@yahoo.com էլեկտրոնային փոստի հասցեով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 30.10.2019թ.-ին ժամը 16:51-ին, 13.11.2019թ.-ին ժամը 14:19-ին, 13.11.2019թ.-ին ժամը 14:57-ին, 02.12.2019թ.-ին ժամը 12:22-ին ուղարկվել են էլեկտրոնային ուղերձ նամակներ: Ինչ վերաբերում է վերոգրյալ ծածկագրով

ընթացակարգի ոչ ավտոմատ ծանուցումները մասնակցի կողմից ստանալուն, հայտնում ենք, որ դրանց հետ վերադարձի մասին հաղորդագրություն համակարգում առկա չէ:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ 28.11.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հասնձնաժողովը հիմք ընդունելով այն, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/4» ծածկագրով ընթացակարգն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետերի և Հրավերի 7.6 և 7.7 կետերի պահանջներով, 30.10.2019թ.-ին որոշել է կասեցնել հայտերի բացման նիստը և գների նվազեցման նպատակով 08.11.2019թ.-ին ժամը 11:50-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) բավարար գնահատված և տվյալ չաւիաբաժինների մասով գնային առաջարկ ներկայացրած բոլոր մասնակիցների հետ («Աիդա Թրեյդ», «Արփիմեդ», «Եվրոֆարմ», «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ, «Տոնոա-Աես», «Թուֆէնկժի Գրուպ», «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ների, «Լիկվոր» «Արֆարմացիա» ՓԲԸ-ի և Գոռ Մնացականյան Ա/Ձ-ի հետ) կազմակերպել միաժամանակյա բանակցություններ:

08.11.2019թ.-ին, ժամը 11:50-ի կայացած նիստում հանձնաժողովն արձանագրել է, որ սահմանված ժամկետին կազմակերպված բանակցություններին մասնակցելու համար ծանուցված մասնակիցներից ներկայացել էին «Աիդա Թրեյդ», «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ների տնօրենները և «Աիկվոր» ՓԲԸ-ի, «Ռիխտեր-Աամբրոն», «Թուֆէնկժի Գրուպ» ՀՁ ՍՊԸ-ների տնօրենների կողմից լիազորված անձիք:

Անցկացված բանակցությունների արդյունքում՝ «Լիկվոր» ՓԲԸ-ի ներկայացուցիչը, համաձայնվել է նվազեցնել ներքոհիշյալ չաւիաբաժինների գները.

9-րդ չափաբաժնի ընդամենը գինը 894,000 (ներառյալ ԱԱՀ-ն), սահմանելով՝ 555,000 (ներառյալ ԱԱՀ-ն) ՀՀ դրամ,

15-րդ չափաբաժնի ընդամենը գինը 2,133,600 (ներառյալ ԱԱՀ-ն), սահմանելով՝ 1,728,000 (ներառյալ ԱԱՀ-ն) ՀՀ դրամ:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների՝ այդ թվում նաև «Եվրոֆարմ» ՍՊԸ-ի հետ պետք է վարեր միաժամանկյա բանակցություններ, եթե հայտերի բացման նիստին ներկա լինեին մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները), իսկ մասնակիցների և վերջիններիս ներկայացուցիչների բացակայության պայմաններում գնահատող

հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային ձևով ծանուցում է մասնակիցներին՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին՝ հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները և այն հանգամանքի հաշվառմամբ, որ գնման ընթացակարգը հայտարարվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, բանակցություններ հրավիրելով, գործել է Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի իմպերատիվ (պարտադիր) դրույթների շրջանակներում, վերջինիս գործողությունները իրավաչափ են և չեն հակասում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

«Եվրոֆարմ» ՍՊԸ-ի կողմից 29.11.2019թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/100 ծածկագրով բողոքը մերժել՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ**
**ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝** **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**